

## Armenian Summer Reading

Incoming 2<sup>nd</sup> Grade / Առաջին 2րդ դասարան անցնող աշակերտները՝

Գիրք/Աշխատանք | Ընթերցարան 1§ Book - “Untertsaran”.



Պարականություն Յանձնարարություն

Կարդալ էջ 42-43՝ Թիթեռ՝ պատմությունը:



### ԹԻԹԵՌԸ

Յասմիկը իր մեծ մայրիկին հետ հանրային պարտեզ կ'երթայ: Մեծ մայրիկը, նստարանին վրայ նստած, ձեռագործ կ'աշխատի, իսկ Յասմիկը գունաւոր գնդակով կը խաղայ:

Յասմիկը յանկարծ կը տեսնէ խոշոր, նախշուն թիթեռ մը, որ կը թռչի ու կը թռչի ծաղիկի մը վրայ: Ան կը մոռնայ գնդակը ու կը վազէ թիթեռնիկին ետեւէն: Երբ կը մօտենայ թիթեռին ու ձեռքը կ'երկարէ զայն բռնելու համար, թիթեռը կը թռչի ու կը թռչի ուրիշ ծաղիկի մը վրայ: Յասմիկը դարձեալ կը մօտենայ թիթեռին. թիթեռը

նորէն կը թռչի: Թիթեռը, Յասմիկին հետապնդումէն յոգնած, կը թռչի հեռու, շատ հեռու:

Յասմիկը տխուր-տրտում կը մօտենայ մեծ մայրիկին:

— Ինչո՞ւ չես խաղար, Յասմիկ:

— Ես կ'ուզէի թիթեռը բռնել ու իրեն հետ խաղալ, սակայն ան չուզեց, թռաւ-գնաց ու կորսուեցաւ: Ան չուզեց բարեկամս ըլլալ:

Մեծ մայրիկը կը ժպտի:

— Յասմիկ, հոգիս, եթէ դուն այդ թիթեռը բռնէիր, այլեւս ան պիտի չկարենար թռչիլ ծաղիկէ-ծաղիկ. ան նոյնիսկ կրնար մեռնիլ:

— Մեծ մայրիկ, ինչ լաւ ըրաւ թիթեռը հեռանալով. ուրախ եմ, որ չկրցայ զայն բռնել,— կ'ըսէ Յասմիկը ու կը վերսկսի գնդակով խաղալ:

Read page 42 the story “Teeter”.